https://doi.org/10.46991/S&L/2023.95.118

ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹ ԿՐՈՂ ԽՄԲԱՎՈՐՄԱՆ ՀԵՏԱՊՆԴԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ[1]

Արման Բաբախանյան
ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական

Կազմակերպված հանցավորությունն ընդհանրապես և քրեական ենթամշակույթի գոյությունը մասնավորապես, ներկայիս առաջադեմ մարդկության առջև ծառացած բարդագույն խնդիրներից են[2]:

Պետք է շեշտել, որ քրեական ենթամշակույթը չի սահմանափակվում միայն քրեակատարողական հիմնարկներում տարածվելով, այն ծավալված է հասարակության առավել լայն շրջանակներում, ուստի այն պետք է արտացոլվի նաև հանցավորության դեմ պայքարի պետության քաղաքականության մեջ՝ ապահովելով արդյունավետ միջոցների կիրառում: Քրեական ենթամշակույթի արմատավորված և բազմատարր բնույթը պահանջում է, որ պետությունը դրա նկատմամբ որդեգրի հատուկ և բազմակողմանի քաղաքականություն: Այն պետք է իրականացվի՝ հաշվի առնելով ենթամշակույթի արմատները, դրա ազդեցության տարածման ուղիները և հեռանկարները[3]:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարի գործում իր ուրույն նշանակությամբ առանձնանում են քրեաիրավական պայքարի միջոցները: Հայաստանի Հանրապետությունում այս արատավոր երևույթի դեմ պայքարը թևակոխել է որակապես նոր փուլ, ինչն իր արտահայտությունն է գտել ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխություններում[4]:

Պայմանավորված այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական ենթամշակույթ կրող անձանց կողմից կատարվող որոշակի արարքների համար քրեական պատասխանատվության միջոցներ ներդրված չէին, հասարակության մոտ ստեղծվում էր թյուր կարծիք առ այն, որ այդպիսի ենթամշակույթի կրողներն անպատժելի են: Չունենալով վստահություն օրենքի կամ օրենքը կիրառող սուբյեկտների հանդեպ կամ գտնելով, որ օրինական ճանապարհով խնդրի լուծման հասնելը բարդ է և ժամանակատար կամ գուցեև անհնարին՝ անձինք նախընտրում էին իրենց «խնդիրների» այլընտրանքային, անօրինական լուծման ճանապարհը՝ ապավինելով քրեական ենթամշակույթում ձևավորված վարքագծի կա-

---

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:

[2] Տե՛ս **Կ. Ա. Բիշարյան,** Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ), գիտական խմբագիր՝ ի.գ.դ., պրոֆեսոր Ս. Վ. Առաքելյան, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 4, http://www.justiceacademy.am/#1954:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հայեցակարգը, Երևան, 2018, էջ 43, https://ombuds.am/images/files/2094e1a8f0bd3e90d09d07b8b65d2fd6.pdf:

[4] Տե՛ս **Կ. Ա. Բիշարյան,** նշված աշխատությունը, էջ 4:

նոնների ներգործության ուժին[1]:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով[2] Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում[3] (այսուհետ նաև՝ նախկին Օրենսգիրք) նախատեսվեցին քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու հանցակազմերը:

Քրեական օրենսդրության շրջանակներում քրեական ենթամշակույթի դեմ պայքարի անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության լայն շերտերի շրջանում այն կանխելու միտումով, քանզի պետք է գիտակցել, որ դրա դեմ պայքարը նպաստելու է միջանձնային հարաբերությունների, մարդկանց արժեհամակարգի բարելավմանը, անօրինական առավելությունների բացառմանը, ինչպես նաև պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոնների պահպանմանը և օրինապահ վարքագծի խթանմանը[4]:

Հարկ է նշել, որ նախկին Օրենսգրքով նախատեսված, վերը թվարկված հանցակազմերը որոշակի փոփոխություններով տեղ են գտել նաև ներկայումս գործող Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի[5] (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) 322-325-րդ հոդվածներում:

Սույն գիտական հոդվածի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում քննարկման առարկա դարձնել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու որոշ հիմնահարցեր:

Այսպես, նոր Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվություն է նախատեսվում քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ դրա հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու կամ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կազմակերպելու կամ դրանց մասնակցելու համար, իսկ նույն հոդվածի 2-րդ մասով՝ քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը բռնության, սպառնալիքի կամ հարկադրանքի այլ եղանակով ներգրավելու համար: Միևնույն ժամանակ, գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 3-րդ մասը տալիս է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հասկացությունը, համաձայն որի՝ «[Հասարակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագործությունները] գլխի իմաստով՝ քրեական ենթամշակույթ

---

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումը (այսուհետ նաև՝ Օրենքի նախագծի հիմնավորում), էջ 2, http://www.parliament.am/draft_docs7/K-288_himnavorum.pdf:

[2] «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը ընդունվել է 2020 թվականի հունվարի 22-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի փետրվարի 22-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2020.02.21/13(1568) Հոդ.167:

[3] Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

[4] Տե՛ս Օրենքի նախագծի հիմնավորումը, էջ 2:

[5] Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքն ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, https://www.arlis.am/:

կրող խմբավորում (գողական աշխարհ) է համարվում քրեական աստիճանակարգությամբ ու միջանձնային հիերարխիկ հարաբերություններով օժտված անձանց միավորումը, որը գործում է իր սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, որոնք չեն համապատասխանում պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրացման իրավաչափ ձևերին, և որի նպատակը հանցագործություն կատարելն է կամ հանցագործության կատարումը հովանավորելը կամ այլ անձանց հանցագործության կատարմանը ներգրավելը կամ բռնության, սպառնալիքի, հարկադրանքի կամ անօրինական այլ գործողությունների միջոցով հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը կամ անօրինական օգուտ կամ այլ առավելություն ստանալը»:

Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված լինելն արտահայտվում է նման խմբավորման մասնակից չհանդիսացող, խմբավորմանը չանդամակցող անձի կողմից գողական աշխարհի կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը որևէ դերակատարությամբ մասնակցելու մեջ: Որպես այդպիսիք հանդես են գալիս քրեական աստիճանակարգությունից դուրս գտնվող, վախից կամ անելանելությունից քրեական ենթամշակույթին հարող այն անձինք, որոնք քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդող նպատակների իրականացմանն ունենում են օժանդակ ներգրավվածություն: Ընդ որում, այդ կատեգորիաների անձանց կողմից խմբավորմանը ներգրավված լինելու օժանդակ դերակատարությամբ պայմանավորված՝ նրանց կողմից պետք է կատարվեն կոնկրետ գործողություններ, որպեսզի արարքը որակվի որպես քրեական ենթամշակույթ կրող խմբավորման նպատակների իրականացմանը ներգրավված լինել: Օրինակ՝ քրեակատարողական հիմնարկում գտնվող «արվամոլների» կողմից «զոն նայողի» միջնորդավորված հանձնարարությամբ թմրամիջոցների, հեռախոսների, արգելված այլ իրերի ներկրումը քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտիներ[1]:

Գտնում ենք, որ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու հիմնահարցերին անդրադառնալիս հարկ է նաև հաշվի առնել արտասահմանյան երկրների վերաբերելի իրավակարգավորումները:

Այսպես, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնած նպատակների իրականացմանը ներգրավված լինելուն նմանվող հանցակազմ նախատեսված է Վրաստանի քրեական օրենսգրքի 223[3]-րդ հոդվածում («գողական համագործակցության» գործունեությանն աջակցել), որի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում «գողական համագործակցությանը» կամ «գողական համագործակցության» անդամին, «օրենքով գողին» բանավոր, գրավոր կամ արտահայտման այլ միջոցներով հրապարակայնորեն աջակցություն արտահայտելու համար, եթե դա ստեղծում է «գողական համագործակցության» գործունեության իրականացման բացահայտ, ուղղակի և էական սպառնալիք, իսկ 2-րդ մասը ցանկացած արարքի համար (բացառությամբ սույն հոդվածի առաջին մասով նախատեսվածի), որը կատարվել է անձի կողմից, ում հայտնի է «գողական համագործակցության» գործունեության մասին, և ով ակտիվ գործողություններով նպաստում է «գողական համագործակցության» գործունեությանը: Ըստ նույն հոդվածի ծանոթագրության 1-ին մասի՝ «Սույն հոդվածով նախատեսված հանցագործություն չի համարվում սնունդ, հագուստ, իրեր, որոնք Վրաստանի օրենսդրությամբ թույլատրված են քրեակատարողական հիմնարկ փոխանցելուն, «գողական համագործակցության» անդամին կամ(և) «օրենքով գողին» փոխանցելը կամ անհետաձգելի գործողություն կատարելը, որն անհրաժեշտ է անձի կյանքը պահպանելու համար, ինչ-

[1] Տե՛ս **Կ. Ա. Բիշարյան,** նշված աշխատությունը, էջեր 36-37:

պես նաև մասնագիտական (ծառայողական) պարտականություններ կատարելը, գործունեություն իրականացնելը, որոնք նախատեսված են Վրաստանի օրենսդրությամբ»[1]: Հարկ է փաստել, որ այս հանցակազմն իր բովանդակությամբ, ըստ էության, նման է գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելուն:

Նման պայմաններում, համեմատաիրավական վերլուծության[2] ենթարկելով գործող Օրենսգրքի 324-րդ և Վրաստանի քրեական օրենսգրքի 223^3-րդ հոդվածները, անհրաժեշտ ենք համարում քննարկման առարկա դարձնել հետևյալ իրավական հարցը. արդյո՞ք անհրաժեշտ է, Վրաստանի քրեական օրենսգրքի 223^3-րդ հոդվածի օրինակով, գործող Օրենսգիրքը լրացնել հատուկ նորմով առ այն, որ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար, եթե քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակից չհանդիսացող անձի կողմից այդպիսի խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը որևէ դերակատարությամբ մասնակցելը դրսևորվել է օրենսդրությամբ թույլատրելի համարվող, իրավաչափ արարքներ կատարելով:

Վերը նշված հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերլուծել գործող Օրենսգրքի Ընդհանուր մասում առկա քրեական պատասխանատվությունը բացառող որոշ հանգամանքներ:

Այսպես, գործող Օրենսգրքի 37-րդ հոդվածի (մասնագիտական գործառույթների իրականացումը) 1-ին մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել ի կատարումն անձի մասնագիտական գործառույթների, եթե պահպանվել են այդ մասնագիտական գործառույթների իրականացման համար իրավական ակտերով սահմանված պահանջները»:

Մասնագիտական գործառույթների իրականացումը, երբ պահպանվում են դրանց համար անհրաժեշտ կանոնակարգերը, չի կարող հանգեցնել որևէ պատասխանատվության: Սակայն, այն պարագայում, երբ դրանց իրականացման արդյունքում «վնաս» է պատճառվում հանրային բարիքներին, հարց է առաջանում, թե ի՞նչ հիմքով տվյալ անձը պետք է ազատվի քրեական պատասխանատվությունից: Ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի ինստիտուտներն ամբողջությամբ չեն կարող կարգավորել այն հասարակական հարաբերությունները, որոնք կարող են ծագել քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու պարագայում, երբ խոսքը անձի մասնագիտական գործառույթների, պարտականությունների կատարման մասին է: Հարկ է նշել, որ այս ինստիտուտի կիրառմամբ անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից միայն այն պարագայում, երբ պահպանվել են այդ մասնագիտական գործառույթների իրականացման համար իրավական ակտերով սահմանված պահանջները: Եթե այդ պահանջները չեն պահպանվել, անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհա-

---

[1] Տե՛ս Վրաստանի քրեական օրենսգիրք, https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=234:

[2] Համեմատաիրավական մեթոդի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **Безбородов Д. А.,** Об использовании сравнительных методов в уголовно-правовом исследовании// Криминалистъ, 2016, N 2(19), Санкт-Петербургский юридический институт (филиал) Академии Генеральной прокуратуры Российской Федерации, 2016, էջեր 7, 9-10, https://procuror.spb.ru/doc/k19.pdf, **Чучаев А. И.,** Пробелы в методах науки уголовного права, Пробелы в российском законодательстве, 2'2008, էջեր 191-192, https://cyberleninka.ru/article/n/probely-v-metodah-nauki-ugolovnogo-prava/viewer:

նուր հիմունքներով[1]:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ իրական կյանքում հնարավոր են դեպքեր, երբ անձի կողմից մասնագիտական գործառույթների իրականացումը որոշ դեպքերում հանգեցնում է անցանկալի հետևանքի, այդ թվում՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառվում է վնաս: Նման դեպքում հարց է առաջանում՝ ինչպես լուծել քրեական պատասխանատվության հարցը: ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածում ամրագրված այս դրույթը բացառում է քրեական պատասխանատվությունը՝ անգամ օրենքով պաշտպանվող շահերին պատճառած վնասի դեպքում, եթե պահպանվել են այդ մասնագիտական գործառույթների իրականացման համար իրավական ակտերով սահմանված պահանջները: Քրեական պատասխանատվությունը բացառելու համար, առաջին հերթին, պարտադիր է վեր հանել այն իրավական ակտերը, որոնք սահմանում են մասնագիտական գործառույթների իրականացման պահանջները: Մյուս հարցը, որի պատասխանից է կախված քրեական պատասխանատվության բացառումը՝ պահպանվել են արդյոք այդ պահանջները, թե՝ ոչ: Եթե իրավական ակտերով սահմանված պահանջները չեն պահպանվել, ապա քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած անձը ենթակա է քրեական պատասխանատվության[2]:

Միևնույն ժամանակ, գործող Օրենսգրքի 39-րդ հոդվածի (օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները կատարելը) 1-ին մասի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա չէ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որը կատարել է օրենքով կամ իրավական այլ ակտերով թույլատրվող արարք կամ իր վրա դրված պարտականություն, եթե պահպանվել են դրա իրականացման՝ օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պայմանները»:

Քննարկվող քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի առկայությունը փաստելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձն անշեղորեն պահպանի օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված համապատասխան կարգավորումները և պայմանները: Գործնականում՝ այն իրական մեծ ազդեցություն ունենալ չի կարող, քանզի, այսպես թե այնպես, օրինական վարքագծի դրսևորման պարագայում որևէ պատասխանատվության մասին խոսք լինել չի կարող, սակայն այս իրավադրույթի սահմանումը կարող է կանխել հնարավոր չարաշահումները և տարամեկնաբանությունները[3]:

Մեկ այլ տեսակետի համաձայն՝ որպեսզի այս հիմքով բացառվի քրեական պատասխանատվությունը քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու համար, պարտադիր են հետևյալ պայմանների համակցությունը. ա) անձը կատարել է օրենքով կամ իրավական այլ ակտերով թույլատրվող արարք կամ իր վրա դրված պարտականություն, բ) պահպանվել են դրա իրականացման՝ օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պայմանները: Վերը նշված պայմաններից բխում է, որ քրեական պատասխանատվության բացառման համար անհրաժեշտ է վեր հանել այն օրենքը կամ իրավական այլ ակտերը, որոնցով թույլատրվում է կատարել արարք, կամ դրանցից բխում է պարտականության կատարումը: Սակայն դա բավարար չէ, պարտադիր է, որ թույլատրվող արարք կամ իր

---

[1] Տե՛ս **Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան,** ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջեր 94-95, https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57:

[2] Տե՛ս **Գ. Թ. Գրիգորյան, Դ. Ա. Թումասյան,** Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս: Ուսումնական ձեռնարկ, Երևան, ՀՀ ոստիկանության կրթահամալիր, Լիմուշ հրատարակչություն, 2022, էջեր 198-199:

[3] Տե՛ս **Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան,** նշված աշխատությունը, էջեր 97-98:

վրա դրված պարտականությունը կատարի օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պայմանների պահպանմամբ[1]:

Այսպիսով, եթե անձը մասնագիտական գործառույթներ իրականացնելիս պահպանել է դրանց համար իրավական ակտերով սահմանված պահանջները կամ օրենքով կամ իրավական այլ ակտերով թույլատրվող արարք է կատարել՝ պահպանելով դրա իրականացման՝ օրենքով կամ իրավական այլ ակտերով սահմանված պայմանները, ենթակա չէ քրեական պատասխանատվության, նույնիսկ եթե դրա արդյունքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել:

Վերը նշված իրավանորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ ենք համարում քննարկել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու հանցակազմի առկայության հարցը հետևյալ իրավիճակներում.

Առաջին իրավիճակ. փաստաբանը, պահպանելով իր մասնագիտական գործառույթների համար իրավական ակտերով սահմանված պահանջները[2], իրականացնում է իր մասնագիտական գործառույթները՝ փաստացի ունենալով օժանդակ ներգրավվածություն քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը:

Երկրորդ իրավիճակ. անձը, պահպանելով հանձնուքներ ուղարկելու օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պայմանները[3], անազատության մեջ գտնվող քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամին հանձնուքներ է ուղարկում՝ փաստացի ունենալով օժանդակ ներգրավվածություն քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը:

Վերը նշված երկու իրավիճակներում էլ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար՝ գործող Օրենսգրքի համապատասխանաբար 37-րդ և 39-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների ուժով: Հետևաբար, բացակայում է անհրաժեշտությունը Վրաստանի քրեական օրենսգրքի 223[3]-րդ հոդվածի օրինակով գործող Օրենսգիրքը լրացնել հատուկ նորմով առ այն, որ անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության քրեական ենթամշակույթ կրող խմբավորման

---

[1] Տե՛ս **Գ. Թ. Գրիգորյան, Դ. Ա. Թումասյան,** նշված աշխատությունը, էջ 202:

[2] Փաստաբանի գործառույթների իրականացմանը ներկայացվող պահանջներ են տրված «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին, ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 22-ին, ՀՀՊՏ 2005.01.21/6(378) Հոդ.102) 5-րդ հոդվածի 1-ին մասում, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (հաստատված է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի՝ 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ) 4.3-րդ կետում, https://advocates.am/images/general_meetings/2019/Kanonagirk_19.10.2019.pdf:

[3] Անազատության մեջ գտնվող անձանց հանձնուքներ ուղարկելու պայմաններ են տրված Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի (ընդունվել է 2022 թվականի հունիսի 15-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, https://www.arlis.am/) 81-րդ հոդվածում, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ընդունվել է 2002 թվականի փետրվարի 6-ին, ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 1-ին, ՀՀՊՏ 2002.04.01/11(186) Հոդ.175) 22-րդ հոդվածում, «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1543-Ն որոշման (ընդունվել է 2006 թվականի օգոստոսի 3-ին, ուժի մեջ է մտել 2006 թվականի դեկտեմբերի 2-ին) 153-րդ կետում, իրերի, առարկաների և սննդամթերքի ցանկում, որոնք արգելվում են ունենալ կալանավորված անձանց և դատապարտյալներին իրենց մոտ, ստանալ կամ ձեռք բերել հանձնուքներով, ծանրոցներով և փաթեթներով (N 2 ձև):

հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար, եթե քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակից չհանդիսացող անձի կողմից այդպիսի խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը որևէ դերակատարությամբ մասնակցելը դրսևորվել է օրենսդրությամբ թույլատրելի համարվող իրավաչափ արարքներ կատարելով:

Ուշագրավ է, որ Վրաստանի քրեական օրենսգրքում, որպես արարքի հակահրավականությունը բացառող հանգամանք, բացի անհրաժեշտ պաշտպանությունից, հանցանք կատարած անձին բռնելուց, ծայրահեղ անհրաժեշտությունից և իրավաչափ ռիսկից, նախատեսված է նաև այլ իրավաչափ արարքների պայմաններում քրեական պատասխանատվությունից ազատելը: Այսպես, ըստ Վրաստանի քրեական օրենսգրքի 32-րդ հոդվածի՝ «Հակահրավական չեն համարվում անձի արարքները, ով կատարել է սույն օրենսգրքով նախատեսված արարքները այլ հանգամանքների առկայության պայմաններում, որոնք թեև սույն օրենսգրքում ուղղակիորեն նշված չեն, բայց լիովին բավարարում են այդ արարքի իրավաչափության պայմանները»[1]: Այսինքն, Վրաստանի քրեական օրենսգրքի 223^3-րդ հոդվածում հատուկ նորմ նախատեսված չլինելու դեպքում նույնիսկ չի առաջանա «օրենսդրական բաց», և անձինք չեն ենթարկվի քրեական պատասխանատվության «գողական համագործակցության» գործունեությանն աջակցելու համար այն դեպքում, երբ «գողական համագործակցության» անդամին կամ «օրենքով գողին» փոխանցեն սնունդ, հագուստ, իրեր, որոնք Վրաստանի օրենսդրությամբ թույլատրված են քրեակատարողական հիմնարկ փոխանցելուն, կամ մասնագիտական (ծառայողական) պարտականություններ կատարեն, գործունեություն իրականացնեն, որոնք նախատեսված են Վրաստանի օրենսդրությամբ:

Անդրադառնալով Վրաստանի քրեական օրենսգրքի 223^3-րդ հոդվածում նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող այն հանգամանքին, որ ««գողական համագործակցության» գործունեությանն աջակցել» հանցագործություն չի համարվում անհետաձգելի գործողություն կատարելը, որն անհրաժեշտ է անձի կյանքը պահպանելու համար, գտնում ենք, որ նման հատուկ նորմ գործող Օրենսգրքում նախատեսելու անհրաժեշտությունը ևս բացակայում է՝ հաշվի առնելով գործող Օրենսգրքի 34-րդ հոդվածով (ծայրահեղ անհրաժեշտությունը), 35-րդ հոդվածով (անհաղթահարելի ուժը, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը) նախատեսված քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների առկայությունը[2]:

Այսպիսով, գործող Օրենսգրքի Ընդհանուր մասում առկա քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների համակարգի պայմաններում բացակայում է Վրաստանի քրեական օրենսգրքի 223^3-րդ հոդվածի ծանոթագրության 1-ին մասում առկա իրավանորմի օրինակով գործող Օրենսգրքում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար քրեական պատասխանատվությունը բացառող հատուկ նորմ սահմանելու անհրաժեշտությունը:

Ի լրումն վերոգրյալի՝ հարկ է նշել, որ գործող Օրենսգրքում նման հատուկ նորմ սահմանելու անհրաժեշտության դեմ է վկայում նաև արտասահմանյան որոշ երկրների փորձը: Այսպես, հենց Վրաստանի քրեական օրենսգրքի այլ հոդվածներում, մասնավորապես՝ 223-րդ (անօրինական միավորում ստեղծելը, ղեկավարելը, այդ-

---

[1] Տե՛ս Վրաստանի քրեական օրենսգիրք, https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=234:

[2] Քրեական պատասխանատվությունը բացառող վերոնշյալ հանգամանքների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս **Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ. Սիմոնյան,** նշված աշխատությունը, էջեր 85-90, **Գ. Թ. Գրիգորյան, Դ. Ա. Թումասյան,** նշված աշխատությունը, էջեր 190-196:

պիսի միավորմանը անդամակցելը, մասնակցելը կամ (և) անօրինական միավորման օգտին այլ գործունեություն իրականացնելը), 223[1]-րդ («գողական համագործակցությունում» անդամակցություն կամ անձի կողմից «օրենքով գողի» կարգավիճակում լինել), 223[2]-րդ («գողական սխոդկային» մասնակցելը), 223[4]-րդ («գողական համագործակցության» անդամին, «օրենքով գողին» դիմելը կամ այդկերպ դիմելու արդյունքում նյութական օգուտ կամ առավելություն ստանալը), 224-րդ (բանդիտիզմ), 224[1]-րդ (շորթմամբ զբաղվող խմբավորմանը մասնակցելը) հոդվածներում բացակայում է համանման հատուկ նորմը[1]:

Ուկրաինայի քրեական օրենսգրքի 255-րդ (հանցավոր համագործակցություն կամ հանցավոր կազմակերպություն ստեղծելը, ղեկավարելը, ինչպես նաև դրան մասնակցելը), 255-1-րդ (հանցավոր ազդեցության հաստատում կամ տարածում), 255-2-րդ (հանցավոր հավաք (սխոդկա) կազմակերպելը, անցկացնելուն աջակցելը կամ մասնակցելը), 255-3-րդ (հանցավոր ազդեցություն կիրառելու համար դիմելը), 256-րդ (հանցավոր կազմակերպության մասնակիցներին աջակցելը և նրան հանցավոր գործունեությունը քողարկելը), 257-րդ (բանդիտիզմ), 260-րդ (օրենքով չնախատեսված ռազմականացված կամ զինված խմբավորումներ ստեղծելը) հոդվածներում ևս նման նորմ առկա չէ[2]:

Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 262-րդ (կազմակերպված խումբ, հանցավոր կազմակերպություն ստեղծելը և ղեկավարելը, ինչպես նաև դրանց մասնակցելը), 263-րդ (հանցավոր համագործակցություն ստեղծելը և ղեկավարելը, ինչպես նաև դրան մասնակցելը), 264-րդ (անդրազգային կազմակերպված խումբ, անդրազգային հանցավոր կազմակերպություն ստեղծելը և ղեկավարելը, ինչպես նաև դրանց մասնակցելը), 265-րդ (անդրազգային հանցավոր համագործակցություն ստեղծելը և ղեկավարելը, ինչպես նաև դրան մասնակցելը), 266-րդ (հանցավոր խմբի գործունեությունը ֆինանսավորելը, ինչպես նաև գույքը պահելը, բաշխելը, ֆինանսավորման աղբյուրներ մշակելը), 267-րդ (անօրինական ռազմականացված միավորում կազմակերպելը), 268-րդ (բանդիտիզմ) հոդվածներում ևս նման հատուկ նորմ նախատեսված չէ[3]:

Նման հատուկ նորմ բացակայում է նաև Իտալիայի քրեական օրենսգրքի 416-րդ (անօրինական միությունը՝ հանցանք կատարելու նպատակով), 416bis (մաֆիոզային տեսակի անօրինական միություն) հոդվածներում[4]:

Սույն գիտական հոդվածի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե որքանով է նպատակահարմար քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատող հատուկ խրախուսական նորմ չնախատեսելը:

Կազմակերպված հանցավոր խմբավորումների համախմբվածության բարձր մակարդակը, դրանց կոռումպացվածությունը և իրավապահ մարմիններից պաշտպանության համակարգի մտածվածությունը պետք է գտնեն համարժեք արտացոլում նորմատիվ իրավական ակտերում՝ նրանց դեմ պայքարի միջոցների մշակման

---

[1] Տե՛ս Վրաստանի քրեական օրենսգիրք, https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=234:

[2] Տե՛ս Ուկրաինայի քրեական օրենսգիրք, https://online.zakon.kz/Document/?doc_id=30418109&pos=2316;-50#pos=2316;-50:

[3] Տե՛ս Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, https://online.zakon.kz/Document/?doc_id=31575252&pos=3946;-48#pos=3946;-48:

[4] Տե՛ս Իտալիայի քրեական օրենսգրքի 416-րդ, 416bis հոդվածներ, https://sherloc.unodc.org/cld/legislation/ita/codice_penale/libro_secondo/article_416-416ter/article_416-416ter.html?lng=en:

գործում[1]:

Պետությունը, հակազդելով կազմակերպված խմբերի հանցավոր գործունեությանը, մի կողմից ուժեղացնում է այդպիսի խմբերում հանցանք կատարած անձանց պատասխանատվությունը, մյուս կողմից, հաշվի առնելով խմբի կազմում հանցանք կատարած անձանց հանրային վտանգավորությունը, դրա փոփոխական բնույթը, խթանում է այդպիսի անձանց հետհանցավոր դրական վարքագիծը, այդ թվում նաև՝ քրեական օրենքի միջոցով[2]:

Քրեաիրավական փոխզիջումը, որպես քրեաիրավական կարգավորման մեթոդ, իրենից ներկայացնում է պետության և հանցագործի փոխշահավետ համագործակցությունը, որի դեպքում առաջին կողմը հասնում է քրեական օրենսդրության խնդիրների իրագործմանը՝ քրեական պատասխանատվությունից ազատելու կամ դա մեղմացնելու տեսքով զիջման գնով, սոցիալապես դրական հետհանցավոր վարքագծի դիմաց: Փոխզիջումը պետք է օրենսդրի կողմից օգտագործվի այն իրավիճակներում, երբ հանցանքի կատարումը կամ դրա բացասական հետևանքների առաջացումը կանխելն այլ միջոցներով անհնար կամ չափազանց դժվար է թվում[3]:

Փոխզիջման ինստիտուտի կոնկրետ դրսևորումներ քրեական իրավունքում հանդիսանում են, հետհանցավոր դրական վարքագծի պայմանով, քրեորեն պատժելի արարք կատարած անձանց ազատելու վերաբերյալ, այսպես կոչված, խրախուսական նորմերը[4]:

Այսպես, գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու մասին իրավասու մարմիններին կամովին հայտնած և դրա գործունեության խափանմանը նպաստած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Եթե անձի փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ է պարունակում, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության այդ հանցագործության համար»[5]:

Ըստ Կ.Ա.Բիշարյանի՝ խրախուսական նորմի գործողությունը չի տարածվում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման կողմից հետապնդվող նպատակների իրականացմանը ներգրավված լինելու մասին հայտնած անձանց վրա՝ նկատի ունենալով, որ վերջիններս, խմբավորմանը ներգրավված լինելով օժանդակ դերակատարությամբ, ի զորու չեն նպաստել խմբավորման գործունեության խափանմանը[6]:

---

[1] Տե՛ս **Оболенский Ю. Б.,** Освобождение от уголовной ответственности за деятельность организованных преступных объединений//Ученые записки Крымского федерального университета имени В.И.Вернадского, Юридические науки, Т.6(72), № 1, 2020, էջ 146, https://cyberleninka.ru/article/n/osvobozhdenie-ot-ugolovnoy-otvetstvennosti-za-deyatelnost-organizovannyh-prestupnyh-obedineniy/viewer:

[2] Տե՛ս **Прозументов Л. М.,** Уголовно-правовое стимулирование позитивного посткриминального поведения участников преступного сообщества (преступной организации) нуждается в совершенствовании//Вестник Томского государственного университета, № 359, 2012, էջ 127, https://vital.lib.tsu.ru/vital/access/manager/Repository/ vtls:000430620:

[3] Տե՛ս **Фильченко А. П.,** Компромисс как метод уголовно-правового регулирования//Вестник Пермского университета, юридические науки, выпуск 2(20), 2013, էջ 257, https://cyberleninka.ru/article/n/kompromiss-kak-metod-ugolovno-pravovogo-regulirovaniya/viewer:

[4] Տե՛ս **Агапов П. В.,** Компромисс как средство противодействия организованной преступной деятельности//Вопросы правоприменительной практики (DE LEGE LATA), էջ 75, https://cyberleninka.ru/article/n/kompromiss-kak-sredstvo-protivodeystviya-organizovannoy-prestupnoy-deyatelnosti/viewer, **Прозументов Л. М.,** նշված աշխատությունը, էջ 127:

[5] Նույնանման խրախուսական նորմ՝ որոշակի եզրութաբանական տարբերություններով, նախատեսված էր նաև նախկին Օրենսգրքի 223.3-րդ հոդվածի (քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը) 4-րդ մասում:

[6] Տե՛ս **Կ. Ա. Բիշարյան,** նշված աշխատությունը, էջ 42:

Հարկ ենք համարում անհամաձայնություն հայտնել վերը մեջբերված կատեգորիկ այն մոտեցմանը, որ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված անձինք, խմբավորմանը ներգրավված լինելով օժանդակ դերակատարությամբ, ի զորու չեն նպաստելու խմբավորման գործունեության խափանմանը: Թեև քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված անձինք, իրոք, ունեն օժանդակ դերակատարություն խմբավորման հետապնդած նպատակների իրականացման գործում, սակայն կարծում ենք, որ կատեգորիկ կերպով բացառել վերջիններիս կողմից խմբավորման գործունեության խափանմանը նպաստելու հնարավորությունն ընդունելի չէ: Հնարավոր են դեպքեր, երբ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված անձը խմբավորման գործունեության վերաբերյալ ունեցած տեղեկությունների, փաստաթղթերի շնորհիվ կամ այլ միջոցներով կարողանա նպաստել այդ խմբավորման գործունեության խափանմանը: Օրինակ, հաշվապահը, չհանդիսանալով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամ և խմբավորմանը ներգրավված լինելով օժանդակ դերակատարությամբ, կարող է ունենալ խմբավորման «սև հաշվապահության» վերաբերյալ այնպիսի տեղեկություններ կամ փաստաթղթեր, որոնք իրավասու մարմիններին ներկայացնելու միջոցով վերջինս կարող է նպաստել այդ խմբավորման գործունեության խափանմանը:

Նման պայմաններում, հատուկ խրախուսական նորմ նախատեսված չլինելու դեպքում քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված անձինք, ովքեր կարող են նպաստել այդ խմբավորման գործունեության խափանմանը, կխուսափեն իրավասու մարմինների հետ համագործակցության միջոցով կամ այլ ձևով խմբավորման գործունեության խափանմանը նպաստելուց՝ հաշվի առնելով, որ վերջիններիս կողմից նույնիսկ նման սոցիալապես դրական հետհանցավոր վարքագիծ դրսևորելը չի հանգեցնելու քրեական պատասխանատվությունից ազատելու:

Այս առումով հատկանշական է նաև, որ խմբում ներգրավված անձինք միշտ չէ, որ ունենում են արտահայտված հանցավոր կողմորոշում, սակայն անզորության, երբեմն ցածր մտավոր կարողության և անփորձության պատճառով չեն կարող հակազդել խմբի կազմակերպչի ճնշմանը: Ի տարբերություն կամավոր խմբի անդամ դարձած անձանց, վերջիններս առավել հակված են ճշմարիտ ցուցմունքներ տալ ոչ միայն իրենց հանցավոր գործունեության, այլ նաև՝ մասնակիցների գործողությունների վերաբերյալ[1]:

Վերոգրյալից բացի, հարկ է նշել, որ սոցիալապես դրական հետհանցավոր վարքագծի պայմանով քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական հատուկ նորմ նախատեսված է նաև քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելուն վերաբերելի մասով (mutatis mutandis) նմանվող Վրաստանի քրեական օրենսգրքի 223[3]-րդ հոդվածում («գողական համագործակցության» գործունեությանն աջակցել)[2]:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ գործող Օրենսգրքում պետք է նախատեսել քրեական պատասխանատվությունից ազատող հատուկ խրախուսական

---

[1] Տե՛ս **Ա. Գասպարյան,** Քրեական ենթամշակույթին առնչվող անձանց հանցավոր գործունեության վերաբերյալ քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումների և քննչական գործողությունների կազմակերպման և կատարման առանձնահատկությունները, Դատական իշխանություն, 2021 մայիս-հունիս 5-6 (263-264), 2021, էջ 89, http://ajra.am/hy/judicial-power:

[2] Տե՛ս Վրաստանի քրեական օրենսգիրք, https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=234:

նորմ քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված անձանց համար, եթե վերջիններս նպաստել են քրեական ենթամշակույթ կրող խմբավորման գործունեության խափանմանը:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված անձանց՝ այդպիսի խմբավորման անդամ չհանդիսանալու, այդ խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն օժանդակ ներգրավվածություն ունենալու հանգամանքները՝ առաջարկում ենք քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինելու համար պատասխանատվություն նախատեսել առանձին հոդվածով և սահմանել առավել մեղմ պատիժ, քան նախատեսված է գործող Օրենսգրքի 324-րդ հոդվածում (քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը):

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УЧАСТИЯ В РЕАЛИЗАЦИИ ЦЕЛЕЙ, ПРЕСЛЕДУЕМЫХ ГРУППОЙ С КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРОЙ

Арман Бабаханян
Аспирант, преподаватель кафедры уголовного права ЕГУ,
помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА

Статья посвящена некоторым вопросам участия в реализации целей, преследуемых группой с криминальной субкультурой. В частности, автор статьи обсуждает отсутствие необходимости предусматривать специальную норму, исключающую уголовную ответственность за участие в реализации целей, преследуемых группой с криминальной субкультурой, когда участие лица, не являющегося членом группы с криминальной субкультурой и играющего какую-либо роль в реализации ее целей, проявляется в совершении действий, считающихся допустимыми законодательством. Кроме того, была упомянута необходимость включения отдельной статьи об ответственности за участия в реализации целей, преследуемых группой с криминальной субкультурой, установления специальной поощрительной нормы, освобождающей от уголовной ответственности лиц, совершивших преступление и продемонстрировавших позитивное постуголовное поведение.

В результате автор предложил предусмотреть ответственность за участия в реализации целей, преследуемых группой с криминальной субкультурой в отдельной статье и установить более мягкое наказание, а также предусмотреть специальную стимулирующую норму, освобождающую от уголовной ответственности лиц, причастных к достижению целей, преследуемых группой с криминальной субкультурой, если последняя способствовала пресечению деятельности группы с криминальной субкультурой.

SOME ISSUES OF INVOLVEMENT IN THE REALIZATION OF THE GOALS PURSUED BY A GROUP WITH A CRIMINAL SUBCULTURE

Arman Babakhanyan
PhD Student, Lecturer at YSU Chair of Criminal Law,
Assistant to the Judge of the Criminal Chamber of the RA Cassation Court

The article is devoted to some issues of involvement in the realization of the goals pursued by a group with a criminal subculture. In particular, the author of the article discussed the lack of need to provide a special norm excluding criminal liability for the above-mentioned act, when the participation of a person, who is not a member of such a group, with any role in the realization of the group's goals was manifested by performing actions considered permissible by the legislation. In addition, reference was made to the need to provide a separate article for the responsibility for the act under discussion, to establish a special incentive norm exempting the persons who committed the crime and demonstrated positive post-criminal behavior from criminal liability.

As a result, the author proposed to provide responsibility for the above-mentioned crime in a separate article and establish more lenient punishment, as well as provide a special incentive norm exempting from criminal responsibility for the persons involved in the realization of the goals pursued by such a group, if the latter contributed to the disruption of the group's activities.

Բանալի բառեր- *քրեական ենթամշակույթ կրող խմբավորում, գողական աշխարհ, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանը ներգրավված լինել, մասնագիտական գործառույթների իրականացում, օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջները կատարել, քրեաիրավական փոխզիջում, քրեական պատասխանատվությունից ազատող խրախուսական նորմ, պատիժ սահմանել*

Ключевые слова: *криминальная субкультурная группа, воровской мир, осуществление профессиональных функций, выполнение требований закона или других правовых актов, уголовно-правовой компромисс, стимулирующая норма, освобождающая от уголовной ответственности, назначение наказания*

Keywords: *group with a criminal subculture, thieves' world, to be involved in the realization of the goals pursued by a group with a criminal subculture, implementation of professional functions, fulfilling the requirements of the law or other legal acts, criminal-legal compromise, incentive norm exempting from criminal liability, imposing punishment*